Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-999[1]-12.10.2010-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-183 օրենքի 14-րդ հոդվածի «30000 դրամ» բառերը փոխարինել «32500 դրամ» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1. ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցություն (27.10.2010թ. թիվ Ա-1202)	1. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսված՝ «32500 դրամ» բառերը փոխարինել «45000 դրամ» բառերով: 2. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված՝ «196», «218» և «326» բառերը համապատասխանաբար փոխել «269», «299» և «447» բառերով:	Չի ընդունվել: «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նվազագույն աշխատավարձը առաջարկվել է 2011 թվականի համար սահմանել 32500 դրամ, որի համար հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի N 859-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում 2011 թվականի համար նվազագույն աշխատավարձի նախատեսված չափը: Ընդ որում, միջնաժամկետ ծախսային ծրագիրը կազմվել է բազմակողմանի վերլուծությունների հիման վրա՝ հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները: Նվազագույն ամսական աշխատավարձի չափը 45000 դրամ սահմանելու դեպքում այն կբերի մակրոտնտեսական կայունության խախտման և կհանգեցնի լրացուցիչ զգալի ծախսերի:

1. ՀՀ Աժ «Ժառանգություն» խմբակցություն (27.10.2010թ. թիվ Ա-1202)	1. «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսված՝«32500 դրամ» բառերը փոխարինել «45000 դրամ» բառերով:	Չի ընդունվել. եկամտահարկի մասին ՀՀ օրենքի փոփոխությունը բխում է նվազագույն ամսական աշխատավարձի մասին ՀՀ օրենքում կատարվող փոփոխություններից:Նվազագույն ամսական աշխատավարձը 45000 դրամ սահմանելու դեպքում այն կբերի մակրոտնտեսական կայունության խախտման և կհանգեցնի լրացուցիչ զգալի ծախսերի: